## ՀՀ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

**24 ՀՈՒՆԻՍԻ 2026թ.** **N 377-Ա**

# ՈՐՈՇՈՒՄ

# ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքների առկայությունը, որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին (պայմանագրի կողմին) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմանների ն չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| «ՀՀՓԿ-ԳՀԱՇՁԲ-06/26» | 1 | «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին պատկանող շենքի 1-ին, 2-րդ և 3-րդ հարկերի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ | 7 676 400 | «Ջի Էլ Թի» ՍՊԸ | 08275477 | Հասցե՝ ՀՀ,Գեղարքունիքի մարզ,ք. Մարտունի Գետափնյա 2-րդ փողոց, 13-րդ նրբ. ,տուն 4ա | 05.06.2026թ. | «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ | Կապալառուն խախտել է կապալային աշխատանքների պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման, մասնավորապես՝ Կապալառուն խախտել է պայմանագրի 1.1 կետը՝ այն է Պայմանագրի 1.3 կետով և Հավելված 2-ով նախատեսված ժամկետում չի կատարել Պայմանագրով սահմանված աշխատանքները: Պայմանագրով սահմանված ժամկետներում Կապալառուի կողմից մասնակի կատարված աշխատանքը չի համապատասխանում Պայմանագրի 1.1 և 1.2 կետերով սահմանված ծավալներին, որի արդյունքում Կապալառուի կողմից չեն պահպանվել նաև Պայմանագրի N 1 հավելվածով (ծավալաթերթ-նախահաշիվ) նախատեսված պահանջները: | - |

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ